ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ – 2017
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ, 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ
Տևողությունը 2,5 ժամ

I. **ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ** (15 **միավոր**)

1) <<**ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**>> (9 **միավոր**)

ա. ***Նշել ճիշտ պատասխանը. 1 – 6–րդ առաջադրանքներ:*** (0,5 X 6 = 3 **միավոր**)

1. **Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության վերջին գահակալն էր՝**
1) Վռամշապուհը 2) Խոսրով IV -ը 3) Արտաշեսը 4) Շապուհը

2. **Ե՞րբ տեղի ունեցավ Նախիջևանի և Խրամի եկեղեցիներում հայ նախարարների դաժան ողջակիզումը**:
1) 701 թ. 2) 702 թ. 3) 703 թ. 4) 705 թ.

3. **Թյուրք-սելջուկների բանակն առաջին անգամ Հայաստան ներխուժեց՝**
1) 1045 թ. 2) 1047 թ. 3) 1048 թ. 4) 1054 թ.

4. **Դավիթ Բեկի գլխավորությամբ ստեղծված հայկական իշխանության կենտրոնատեղին էր՝**
1) Հալիձորի բերդը 2) Բաղաբերդը 3) Որոտանի բերդը 4) Կապանը

5. **Երևանի նահանգը հիմնվեց՝**
1) 1828 թ. 2) 1840 թ. 3) 1844 թ. 4) 1849 թ.

6. **Հայ ազգային-հասարակական մտքի յուրահատուկ դարբնոց դարձավ Գրիգոր Արծրունու հիմնադրած՝**
1) <<Մշակ>> թերթը 3) <<Մեղու>> հանդեսը
2) <<Հյուսիսափայլ>> հանդեսը 4) <<Ազատամարտ>> պարբերականը

բ. (1 X 3 = 3 **միավոր**)

1. **Հայ Արշակունի արքաների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության**: *(1 **միավոր**)*

ա. Պապ
բ. Վաղարշ II
գ. Արշակ II
դ. Արտաշես
ե. Վռամշապուհ
զ. Տրդատ III

1	2	3	4	5	6

2. **Կարդալ մեջբերված տեքստը և պատասխանել հարցերին**:

(0,5 X 2 = 1 ***միավոր****)*

<< ... հնում Կեսարիայի ուրիշ փասը քաղաք մերն են եղել, ե՛ր փուր, Ուռհա (Եդեսիա) քաղաքն էլ մեր նախնիքն են շինել, ուսրի եթե չես ուզում, որ խռովություն ծագի մեր մեջ, ե՛ր փուր>>:

Հայոց ո՞ր թագավորն է նման պահանջ ներկայացրել հռոմեական կայսրին: Ո՞ր պատմիչի մատյանից է մեջբերված հատվածը:

_____

_____

3. **Համապատասխանեցնել Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանին վերաբերող իրադարձություններն ու դրանց տարեթվերը:**

(1 ***միավոր****)*

1) Վասպուրականի թագավորության առաջացումը	ա) 914 թ.
2) Տաշիր-Զորագետի թագավորության առաջացումը	բ) 908 թ.
3) Սյունիքի թագավորության հիմնումը	գ) 963 թ.
4) Վանանդի (Կարսի) թագավորության հիմնումը	դ) 987 թ.
5) Բաղդադի խալիֆի կողմից Աշոտ II-ին Հայաստանի շահնշահ ճանաչելը	ե) 922 թ.
	զ) 978 թ.

1	2	3	4	5

գ. Գրել պատասխանները: (3 **միավոր**)

1. **Ընտրել երեք սխալ պնդումները.** *(1* ***միավոր****)*

ա. Լեռնային Կիլիկիայում 1080 թ. Ռուբենի հիմնադրած նոր իշխանությունը նրա անունով կոչվեց Ռուբինյան:

բ. Ռուբեն I իշխանին հաջորդեց նրա որդին՝ Թորոս I-ը:

գ. Թորոս I-ին հաջորդեց նրա եղբայր Լևոն I-ը (1129-1137 թթ.), որը բյուզանդացիներից գրավեց Մսիս, Ադանա և Տարսոն քաղաքները:

դ. Թորոս II իշխանի ջանքերով 1151 թ. Հայոց կաթողիկոսի նստավայրը տեղափոխվեց Հռոմկլա, ուր մնաց մինչև 1441 թվականը :

ե. Թորոս II-ին հաջորդեց նրա եղբայր Մլեհը, որը բարեկարգեց Սիս քաղաքը և դարձրեց Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք:

զ. Մլեհին հաջորդեց նրա եղբայր Ստեփանեն, որի օրոք Կիլիկիայում վերացվեցին բյուզանդական տիրապետության վերջին հենակետերը:

է. Լևոն II-ի և Անտիոքի իշխան Բոհեմունդի միջև 1194 թ. Սիս քաղաքում կնքված հաշտության պայմանագրով Բոհեմունդը Կիլիկիային վերադարձրեց նրանից խլված տարածքները:

2. **Ընտրել երեք ճիշտ պնդումները**. *(1 միավոր)*

ա. Ջհանշահի կառավարման ժամանակաշրջանում (1437-1467 թթ.) Գեղարքունիքի, Վայոց ձորի, Արցախի, Սյունիքի և մի շարք այլ շրջանների հայ իշխանական տները վերականգնեցին իրենց իշխանությունն ու վարչական կառավարումը :

բ. 1547 թ. Էջմիածնում Միքայել Սեբաստացի կաթողիկոսը հրավիրում է գաղտնի խորհրդակցություն, որտեղ որոշվում է իր գլխավորությամբ պատվիրակություն ուղարկել Եվրոպա:

գ. Հովսեփ Էմինը ծնվել է 1726 թ. Պարսկաստանի Համադան քաղաքում, որտեղից նրանց ընտանիքը տեղափոխվել է Կալկաթա:

դ. Հ. Էմինը, հակառակ հոր կամքին, ուղևորվում է Անգլիա, որտեղ ընդունվում է Քեմբրիջի զինվորական ակադեմիա, ծանոթանում մի շարք քաղաքական և պետական գործիչների հետ, հմտանում ռազմական արվեստում:

ե. Անգլիայում դեսպան Գոլիցինից վերցնելով Ռուսաստանի վարչապետ Վորոնցովին ուղղված հանձնարարական նամակ՝ 1751 թ. Հ. Էմինը ճանապարհվում է Սանկտ Պետերբուրգ:

զ. 1764 թ. Հ. Էմինը և Հերակլ II-ը խրախուսական նամակներ են ուղարկում Մշո Ս. Կարապետ վանքի վանահայր Հովնանին, սակայն Երևանում խանի մարդիկ նամակատարին ձերբակալում են:

է. Տեղեկանալով այդ մասին, Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը նամակով կշտամբում է Հերակլ II-ին հայ ժողովրդի համար վտանգավոր, անշրջահայաց քայլերի համար, որից հետո Հերակլը Էմինից պահանջում է հեռանալ Վրաստանից:

3. **1878 թ. Սան-Ստեֆանոյի ռուս-թուրքական պայմանագրին վերաբերող ստորև տրված դրույթների շարքում նշել երեք սխալ պնդում**: *(1 միավոր)*

ա) Ռուս-թուրքական հաշտության պայմանագիրը կնքվեց 1878 թ. փետրվարի 19-ին Կ.Պոլսից ոչ հեռու գտնվող Սան-Ստեֆանո ծովափնյա ավանում՝ հայ մեծահարուստ Առաքել Դադյանի ամառանոցում:

բ) Պայմանագրով Ռուսաստանին էին անցնում Կարսի, Կաղզվանի, Օլթիի, Արդահանի, Ալաշկերտի և Բայազետի գավառները, Սև ծովի ծովափնյա շրջանները՝ Տրապիզոն նավահանգստով :

գ) Էրզրումը և Բասենը մնում էին Օսմանյան կայսրությանը:

դ) Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով Բարձր դուռը պարտավորվում էր Արևմտյան Հայաստանում ռուսների գրաված և Թուրքիային վերադարձվելիք գավառներում անհապաղ բարենորոգումներ անցկացնել:

ե) Պայմանագրի 25-րդ հոդվածն իրավունք էր տալիս ռուսական զորքերին մեկ տարի ժամկետով մնալու Հայաստանում :

զ) Պայմանագրի 27-րդ հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր չհալածել պատերազմում ռուսներին աջակցած քրիստոնյաներին:

է) Պայմանագրում առկա <<Հայաստան>> բառը վերջնական տարբերակում փոխարինվեց <<հայաբնակ մարզեր>> բառակապակցությամբ:

2) <<**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**>> (6 **միավոր**)

ա. ***Նշել ճիշտ պատասխանը. 1 – 4 – րդ առաջադրանքներ:*** (0,5 X 4 = 2 **միավոր**)

1. **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկվածներից ո՞ր իրադարձությունն է տեղի ունեցել վերջինը**: *(0,5 **միավոր**)*

1) Սուլլայի դիկտատուրայի հաստատումը Հռոմում
2) Դարեհ Ի-ի գահակալումը Պարսկաստանում
3) Պելոպենեսյան պատերազմների ավարտը
4) Տրայանոս կայսեր կառավարումը Հռոմում
5) Ակցիումի ճակատամարտը Օկտավիանոսի և Անտոնիոսի զորքերի միջև

2. **Ո՞վ է <<Խորհրդավոր ընթրիքը>> որմնանկարի հեղինակը**: *(0,5 **միավոր**)*

1) Լեոնարդո դա Վինչի 3) Ռաֆայել Սանտի
2) Միքելանջելո Բոունարոտի 4) Սանդրո Բոտիչելլի

3. **Ե՞րբ տեղի ունեցավ Սուասոնի ճակատամարտը:** *(0,5 **միավոր**)*

1) 486 թ. 2) 496 թ. 3) 500 թ. 4) 511 թ.

4. **Ո՞վ է <<Ուտոպիա>> աշխատության հեղինակը**: *(0,5 **միավոր**)*

1) Ֆրանսուա Ռաբլե 2) Նիկոլո Մաքիավելի 3) Թոմաս Մոր 4) Էրազմ Ռոդերդամցի

բ. (1 X 2 = 2 **միավոր**)

1. **Համապատասխանեցնել պատմական իրադարձություններն ու դրանց տարեթվերը:** *(1 **միավոր**)*

1) <<Գերագահության մասին ակտի>> ստորագրումն Անգլիայում
2) <<Բարդուղիմեոսյան գիշերը>> Ֆրանսիայում
3) Նանտի էդիկտի հրապարակումը Ֆրանսիայում
4) Ուտրեխտի միության կնքումը և Հոլանդիայի հիմնումը
5) Վեստֆալյան հաշտության կնքումն ու Երեսնամյա պատերազմի ավարտը

ա) 1648 թ.
բ) 1618 թ.
գ) 1534 թ.
դ) 1598 թ.
ե) 1572 թ.
զ) 1579 թ.

1	2	3	4	5

2. **Համապասխանեցնել երկրները դրանք ներկայացնող գործիչների անուններին**. *(1 **միավոր**)*

1) Գերմանիա
2) Ֆրանսիա
3) Ռուսաստան
4) Իտալիա
5) Անգլիա

ա) Նիկոլո Մաքիավելի
բ) Հենրիխ Հերց
գ) Թոմաս Ջեֆերսոն
դ) Էռնեստ Ռեզերֆորդ
ե) Էմիլի Լենց
զ) Ռենե Դեկարտ

1	2	3	4	5

գ. (1 X 2 = 2 **միավոր**)

1. **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը**: *(1 **միավոր**)*

1) Կոնսուլ
2) Մայորդոմ
3) Ռեֆորմացիա
4) Ռեկոնկիստա
5) Ռենեսանս

ա) Հին Հունաստանում բռնի ուժով իշխանությունը գրաված և միանձնյա կառավարող անձ

բ) Հին Հռոմի պետական բարձրագույն պաշտոնյա

գ) Պիրենեյան թերակղզու բնիկ ժողովուրդների կողմից մուսուլմաններից իրենց հողերի հետնվաճման ժամանակաշրջանը, որն սկսվել էր արաբների կողմից Իսպանիայի գրավումից անմիջապես հետո:

դ) Իտալիայում 14-րդ դարում սկիզբ առած հասարակական-քաղաքական, մշակութային շարժում, որը նշանավորվել է խոշոր հայտնագործություններով ու գյուտերով, ինչպես նաև անտիկ մշակույթի նկատմամբ հետաքրքրության արթնացմամբ:

ե) Ֆրանկական թագավորությունում Մերովինգների օրոք տնտեսության և թագավորական ունեցվածքի կառավարիչ, որի պաշտոնը աստիճանաբար դարձավ ժառանգական:

զ) Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայում 16-րդ դարի առաջին կեսում սկսված հասարակական-քաղաքական շարժում, որն ուղղված էր կաթոլիկ եկեղեցու արմատական վերափոխմանը:

1	2	3	4	5

2. **Իրադարձությունները դասավորել ըստ դրանց ժամանակագրական հաջորդականության:** *(1 **միավոր**)*

ա) Հուլիոս Կեսարի հռչակվելը ցմահ դիկտատոր
բ) Օկտավիանոսի հռչակվելը ցմահ տրիբուն
գ) Երկրորդ եռապետության ստեղծումը Հռոմում
դ) Խառանի ճակատամարտը
ե) Սելևկիայի և Տիզբոնի գրավումը Տրայանոս կայսեր կողմից
զ) Ցին Շի Հուանդիի կառավարումը

1	2	3	4	5	6

II. ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (5 **միավոր**)

1. **Արևմտահայերի ազգային սահմանադրությունը:**

Ներկայացնել արևմտահայերի ազգային սահմանադրության ընդունման պատմությունը և սահմանադրության նշանակությունը հայ հասարակական-քաղաքական կյանքում:

(2,5 **միավոր**)

2. **Ռուսաստանը և քաղաքակրթական պառակտումը 1917 թվականին**:

Ներկայացնել տնտեսական և ռազմաքաղաքական ճգնաժամի խորացումը, հեղափոխական մեծ ճգնաժամը 1917 թ. փետրվարին և հոկտեմբերին, Հոկտեմբերյան հեղափոխության քաղաքակրթական հետևանքը: (2,5 **միավոր**)

Է. Մինասյան **Պատմության հանձնաժողովի նախագահ** 27.02.2017 թ.